ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2020 թվականի ապրիլ ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2020 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 16063.3 մլն դրամ՝ պլանավորված 15300.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 5 տոկոսով կամ 763.3 մլն դրամով:

Ապրիլ ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 4285.8 մլն դրամ՝ պլանավորված 4000 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 7.1 տոկոսով կամ 285.8 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 65 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 3 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել են 10 ստուգումներ, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 12.7 մլն դրամի չափով հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 45 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 31-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 5-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 3-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և 6 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան են ներկայացվել 1 սնանկության հայց՝ 9645.3 հազ. դրամ գումարով և վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ 9 հայցադիմում՝ 180.0 հազ. դրամ գումարով:

Դատական մարմինների կողմից նույն ժամանակահատվածում կայացվել է 5 վճիռ՝ 718623.4 հազ. դրամ ընդհանուր գումարով, որից 3-ը՝ 15083.8 հազ. դրամ գումարով, բռնագանձման հայցերի, 1-ը՝ 703524.6 հազ. դրամ գումարով, սնանկության հայցերի և 1-ը՝ 15.0 հազ. դրամ գումարով, վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ հայցերի հիման վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 38 վարչական գործով սահմանվել է 585.0 հազ. դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 14414 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 13663:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 112 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում ապրիլ ամսում կատարվել է վերադարձ 155 վարձու աշխատողի՝ 23.1 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 14 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում՝ երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի ու տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Նոր տեսակի կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված ամենօրյա կտրվածքով իրականացվել են կանխարգելիչ միջոցառումներ՝ ուղղված նախարարության գործառույթների իրականացման ընթացքում աշխատակիցների և հարկ վճարողների անվտանգության ապահովմանը, ինչպես նաև ուսումնասիրվել կորոնավիրուսի տնտեսական հետևանքները տարբեր ոլորտների վրա:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30.1-ին հոդվածով սահմանված կարգով կայքում հրապարակվել է առաջին 300 խոշոր հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկը:

Հաշվետու ամսում շարունակվել է նաև կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչի մասնակից քաղաքացիների վճարած սոցիալական վճարների գումարների վերահաշվարկի գործընթացը, որի շրջանակներում 85 քաղաքացու վերադարձվել է սոցիալական վճարի ավել վճարված մասը:

«Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ԱՀ օրենքին համապատասխան՝ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամից վերադարձ ստանալու նպատակով պատրաստվել և անհատ ձեռնարկատերերին է տրամադրվել վճարված դրոշմանիշային վճարների չափի մասին թվով 46 տեղեկանք:

Ապրիլ ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 247, ելքագրվել՝ 201 նամակ-գրություն, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 4 գրություն, որից 3-ը՝ էլեկտրոնային եղանակով: